ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հունվարի 2015 թվականի № 2-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի «ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» № 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի , «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ ,3-րդ և 5-րդ մասերի պահանջներով՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 28-ի «Համայնքի 2015 թվականի բյուջեի հաստատման մասին» № 37-Ն որոշման մեջ կատարված հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետի «1» և «2» ենթակետերի «38 684.4» թիվը փոխարինել « 39 387.3» թվով:

2) Որոշման 6-րդ կետի «0» թիվը փոխարինել « 17764.2 հազար դրամ» բառերով:

3) Որոշման 7-րդ կետի «1» ենթակետի «0» թիվը փոխարինել « 9 520.8 հազար դրամ» բառերով:

4) Որոշման 7-րդ կետի «2» ենթակետի «0» թիվը փոխարինել « 8 243.4 հազար դրամ» բառերով:

5) Որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի հատված 1-ի՝

ա.գույքահարկի «2 500.0» թիվը փոխարինել « 3 000.0» թվով,

բ. փոխադրամիջոցների «2 100.0» թիվը փոխարինել « 2 600.0» թվով,

գ.տեղական վճարների «404.0» թիվը փոխարինել « 609.0» թվով,

դ.աղբահանության վճարի «400.0» թիվը փոխարինել « 605.0» թվով,

ե.համահարթեցման սկզբունքով պետական բյուջեից տրվող դոտացիայի «30 796.4» թիվը փոխարինել « 30 794.3» թվով,

զ.ընդամենը տողի « 38 684.4» թիվը փոխարինել « 39 387.3» թվով:

6) Որոշման հավելվածի հատված 2-ի՝

ա.աղբահանման «995.0» թիվը փոխարինել « 1 700.0» թվով,

բ.պահուստային ֆոնդի «1 992.646» թիվը փոխարինել « 1 990.5» թվով,

զ.ընդամենը տողի « 38 684.4» թիվը փոխարինել « 39 387.3» թվով:

7) Որոշման հավելվածի հատված 3-ի՝

ա.կոմունալ ծառայությունների «1 125.0» թիվը փոխարինել « 1 830.0» թվով,

բ.պահուստային ֆոնդի «1 992.646» թիվը փոխարինել « 1 990.5» թվով,

զ.ընդամենը տողի « 38 684.4» թիվը փոխարինել « 39 387.3» թվով:

8) Որոշման հավելվածի հատված 6-ի՝

ա.աղբահանման «995.0» թիվը փոխարինել « 1 700.0» թվով,

բ.պահուստային ֆոնդի «1 992.646» թիվը փոխարինել « 1 990.5» թվով:

2. Որոշման 7-րդ կետը լրացնել «5», «6», «7», «8» ենթակետերով՝

«5) Հաստատել համայնքի 2015 թվականի ֆոնդային բյուջեի հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման հոդվածների հետևյալ չափերով

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ)
01.1.1	օրենսդիր և գործադիր մարմին,պետական կառավարում	9 930.0
01.6.1	ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	5 000.0
04.2.4	ոռոգում	1 030.0
04.5.1	ճանապարհային տրանսպորտ	1 803.9
Ընդամենը		17 764.2

6) Հաստատել համայնքի 2015 թվականի ֆոնդային բյուջեի հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակներն ըստ բյուջետային դասակարգման տնտեսագիտական հոդվածների հետևյալ չափերով.

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ)
5112	Շենքերի և շինությունների կառուցում	980.0
5113	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	11 484.2
5133	Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր	5 000.0
5134	Նախագծահետազոտական ծախսեր	300.0
Ընդամենը		17 764.2

7) Հաստատել համայնքի 2015 թվականի ֆոնդային բյուջեի միջոցների հաշվին իրականացվող կապիտալ աշխատանքների ցանկը.

5112 Շենքերի և շինությունների կառուցում 9800.0 հազար դրամ

5113 Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 11 484.2հազար դրամ

5133 Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր 5 000.0 հազար դրամ

5134 Նախագծահետազոտական ծախսեր 300.0 հազար դրամ

8)Սահմանել, որ սույն որոշման անբաժանելի մասն են կազմում համայնքի 2014 թվականի բյուջեով նախատեսված եկամուտների և ծախսերի հիմնավորումները, հաշվարկները, այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունները»: »

Կողմ(7) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ